

Կ-515-12.03.2020,04.05.2020-ՏՏԳԲ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎՈՂ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐԿԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» 2001 թվականի մայիսի 15-ի ՀՕ-188 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածում՝

1) առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետությունում մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերությունների, ինչպես նաև Շրջակա միջավայրի բնազավառի լիազոր մարմնի կողմից սահմանվող այլ ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկից մասհանումներ կատարվում եւ առանձին տողով արտացոլվում են այն համայնքների բյուջեներում, որոնց տարածքում նշված ընկերությունների գործունեությունը թողնում է վնասակար ազդեցություն: Շրջակա միջավայրի բնազավառի լիազոր մարմինը սույն պարբերության մեջ նշված այլ ընկերությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված չափորոշիչների հիման վրա:».

2) երկրորդ պարբերության երրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Մասհանումների չափերը որոշվում են՝ ելնելով սույն հոդվածում նշված համապատասխան ընկերությունների կողմից առաջիկա բյուջետային տարվան նախորդող երկրորդ, երրորդ եւ չորրորդ տարիների արդյունքներով պետական բյուջե փաստացի վճարված (2018 թվականի եւ հետագա տարիների համար՝ բնապահպանական հարկի եւ բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկներով հաշվարկված) բնապահպանական հարկի հանրագումարից՝ պակասեցնելով այն բյուջետային տարվան նախորդող առաջին երկու

տարիների կտրվածքով սույն օրենքով սահմանված կարգով համապատասխան համայնքներին կատարված մասհանումների չափով:».

2) երկրորդ պարբերության երրորդ նախադասությունից հետո լրացնել նոր նախադասություն հետեւյալ բովանդակությամբ.

«Համայնքների եւ/կամ բնակավայրերի ցանկի կազմումը և ըստ համայնքների եւ/կամ բնակավայրերի մասհանումների բաշխման չափի հաշվարկումն իրականացվում է Շրջակա միջավայրի բնագավառի լիազոր մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:»:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածում`

1) առաջին պարբերության վերջին նախադասությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Ծրագիրը յուրաքանչյուր տարի հրապարակվում է համայնքի ղեկավարի կողմից համայնքապետարանի կայքում եւ/կամ համապատասխան մարզպետարանի կայքում համայնքի ղեկավարի ներկայացմամբ:».

2) վերջին պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություն հետեւյալ բովանդակությամբ.
«Ընթացիկ տարվա Ծրագրի իրականացման վերաբերյալ համայնքի ղեկավարը կազմում է հաշվետվություն եւ ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը մինչեւ հաջորդ տարվա մարտի 1-ը: Համայնքի ավագանու կողմից հաստատված հաշվետվությունը մինչեւ հաջորդ տարվա մայիսի 1-ը հրապարակվում է համայնքի ղեկավարի կողմից համայնքապետարանի կայքում եւ/կամ համապատասխան մարզպետարանի կայքում համայնքի ղեկավարի ներկայացմամբ: Հաշվետվության ձեւը հաստատվում է տարածքային կառավարման բնագավառի պետական լիազորված մարմնի կողմից:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հոդված 4. Անցումային դրույթներ

1. Մինչեւ սույն օրենքի առաջին հոդվածով սահմանված ցանկի սահմանումը սույն օրենքի կարգավորումները, ի լրումն բոլոր մետաղական օգտակար հանածո արդյունահանելու թույլտվություն ունեցող ընկերությունների, տարածվում են նաեւ «ԱՐՄԵՆԻԱՆ ՔԱՓԸՐ ՓՐՈԳՐԱՄ», «ԱՐԱՐԱՏՑԵՄԵՆՏ», «ՀՐԱԶԴԱՆ ՑԵՄԵՆՏ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ», «ՀՐԱԶԴԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՀՐԱԶԶԷԿ)», «ԵՐԵՎԱՆԻ ԶԵՐՄԱԷԼԵԿՏՐՈԿԵՆՏՐՈՆ», «ԳԱԶԵԳՈՐԾ», «ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈԿԱԿԱՅԱՆ», «ՆԱԻՐԻՏ ԳՈՐԾԱՐԱՆ» եւ «ԳԱԶ» փակ բաժնետիրական ընկերությունների, «ԱՐՄԵՆԻԱՆ ՄՈԼԻԲԴԵՆ ՓՐՈԴԱԲՇՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ»,

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԵՎ «ԶՈՒԼԱԿԵՆՏՐՈՆ» բաց բաժնետիրական ընկերությունների բնապահպանական հարկերի վրա:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝

1) սույն օրենքի 1-ին հոդվածի առաջին մասում նշված այլ ընկերությունների ընտրության չափորոշիչները Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանվում են վեցամսյա ժամկետում.

2) սույն օրենքի 1-ին հոդվածի երկրորդ մասում նշված համայնքների եւ/կամ բնակավայրերի ցանկի կազմման և ըստ համայնքների եւ/կամ բնակավայրերի մասհանումների բաշխման չափի հաշվարկման կարգը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանվում է վեցամսյա ժամկետում.

3) սույն օրենքի 2-րդ հոդվածի երկրորդ մասում նշված հաշվետվության ձեւը տարածքային կառավարման բնագավառի պետական լիազորված մարմնի կողմից հաստատվում է եռամսյա ժամկետում:

Տեղեկանք
Օրենքի նախագծում կատարված փոփոխության մասին

«ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՆԱԿԱՆ ՀԱՐԿԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» 2001 թվականի մայիսի 15-ի ՀՕ-188 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածում՝

1) առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետությունում մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերությունների, ինչպես նաև Շրջակա միջավայրի բնագավառի լիազոր մարմնի կողմից սահմանվող այլ ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկից մասհանումներ կատարվում եւ առանձին տողով արտացոլվում են այն համայնքների բյուջեներում, որոնց տարածքում նշված ընկերությունների գործունեությունը թողնում է վնասակար ազդեցություն: Շրջակա միջավայրի բնագավառի լիազոր մարմինը սույն պարբերության մեջ նշված այլ ընկերությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված չափորոշիչների հիման վրա:».

2) երկրորդ պարբերության երրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Մասհանումների չափերը որոշվում են՝ ելնելով սույն հոդվածում նշված համապատասխան ընկերությունների կողմից առաջիկա բյուջետային տարվան նախորդող երկրորդ, երրորդ եւ չորրորդ տարիների արդյունքներով պետական բյուջե փաստացի վճարված (2018 թվականի եւ հետագա տարիների համար՝ բնապահպանական հարկի եւ բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկներով հաշվարկված) բնապահպանական հարկի հանրագումարից՝ պակասեցնելով այն բյուջետային տարվան

նախորդող առաջին երկու տարիների կտրվածքով սույն օրենքով սահմանված կարգով համապատասխան համայնքներին կատարված մասհանումների չափով: ~~Ըստ համայնքների կամ բնակավայրերի մասհանումների բաշխման չափի հաշվարկումն իրականացվում է Շրջակա միջավայրի բնագավառի լիազոր մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:~~

3) երկրորդ պարբերության երրորդ նախադասությունից հետո լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ.

«Համայնքների եւ/կամ բնակավայրերի ցանկի կազմումը և ըստ համայնքների եւ/կամ բնակավայրերի մասհանումների բաշխման չափի հաշվարկումն իրականացվում է Շրջակա միջավայրի բնագավառի լիազոր մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:»:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածում՝

1) առաջին պարբերության վերջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ծրագիրը յուրաքանչյուր տարի հրապարակվում է համայնքի ղեկավարի կողմից համայնքապետարանի կայքում և/կամ համապատասխան մարզպետարանի կայքում համայնքի ղեկավարի ներկայացմամբ:».

2) վերջին պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Ընթացիկ տարվա Ծրագրի իրականացման վերաբերյալ համայնքի ղեկավարը կազմում է հաշվետվություն և ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը: Համայնքի ավագանու կողմից հաստատված հաշվետվությունը մինչև հաջորդ տարվա մայիսի 1-ը հրապարակվում է համայնքի ղեկավարի կողմից համայնքապետարանի կայքում և/կամ համապատասխան մարզպետարանի կայքում համայնքի ղեկավարի ներկայացմամբ: Հաշվետվության ձևը հաստատվում է տարածքային կառավարման բնագավառի պետական լիազորված մարմնի կողմից:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝

~~1. Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասում նշված այլ ընկերությունների ընտրության չափորոշիչները վեցամսյա ժամկետում սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:~~

~~2. Սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասում նշված ըստ համայնքների կամ բնակավայրերի մասհանումների բաշխման չափի հաշվարկման կարգը վեցամսյա ժամկետում սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:~~

~~3. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասում նշված հաշվետվության ձեւը եռամսյա ժամկետում հաստատվում է տարածքային կառավարման բնագավառի պետական լիազորված մարմնի կողմից:~~

Հոդված 4. Անցումային դրույթներ

~~3. Մինչեւ սույն օրենքի առաջին հոդվածով սահմանված ցանկի սահմանումը սույն օրենքի կարգավորումները, ի լրումն բոլոր մետաղական օգտակար հանածո արդյունահանելու թույլտվություն ունեցող ընկերությունների, տարածվում են նաեւ «ԱՐՄԵՆԻԱՆ ՔԱՓՈՐ ՓՐՈԳՐԱՄ», «ԱՐԱՐԱՏՑԵՄԵՆՏ», «ՀՐԱԶՂԱՆ ՑԵՄԵՆՏ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ», «ՀՐԱԶՂԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՀՐԱԶԶԷԿ)», «ԵՐԵՎԱՆԻ ԶԵՐՄԱԷԼԵԿՏՐՈԿԵՆՏՐՈՆ», «ԳԱԶԵԳՈՐԾ», «ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈԿԱՅԱՆ», «ՆԱԻՐԻՏ ԳՈՐԾԱՐԱՆ» եւ «ԳԱԶ» փակ բաժնետիրական ընկերությունների, «ԱՐՄԵՆԻԱՆ ՍՈԼԻԲԴԵՆ ՓՐՈԴԱԲԵՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ», «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» եւ «ԶՈՒԼԱԿԵՆՏՐՈՆ» բաց բաժնետիրական ընկերությունների բնապահպանական հարկերի վրա:~~

~~4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո`~~

~~1) սույն օրենքի 1-ին հոդվածի առաջին մասում նշված այլ ընկերությունների ընտրության չափորոշիչները Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանվում են վեցամսյա ժամկետում.~~

~~2) սույն օրենքի 1-ին հոդվածի երկրորդ մասում նշված համայնքների եւ/կամ բնակավայրերի ցանկի կազմման և ըստ համայնքների եւ/կամ բնակավայրերի մասհանումների բաշխման չափի հաշվարկման կարգը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանվում է վեցամսյա ժամկետում.~~

~~3) սույն օրենքի 2-րդ հոդվածի երկրորդ մասում նշված հաշվետվության ձեւը տարածքային կառավարման բնագավառի պետական լիազորված մարմնի կողմից հաստատվում է եռամսյա ժամկետում:~~

Հոդված 5. Անցումային դրույթներ

~~Մինչեւ սույն օրենքի առաջին հոդվածով սահմանված ցանկի սահմանումը սույն օրենքի կարգավորումները, ի լրումն բոլոր մետաղական օգտակար հանածո արդյունահանելու թույլտվություն ունեցող ընկերությունների, տարածվում են նաեւ «ԱՐՄԵՆԻԱՆ ՔԱՓՈՐ~~

ՓՐՈՂՐԱՄ», - «ԱՐԱՐԱՏՑԵՄԵՆՏ», - «ՀՐԱԶՂԱՆ ՑԵՄԵՆՏ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ», - «ՀՐԱԶՂԱՆԻ
ԷՆԵՐԳԵՏԻԿ — ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ» — (ՀՐԱԶԶԵԿ), — «ԵՐԵՎԱՆԻ
ԶԵՐՄԱԷԼԵԿՏՐՈՎԵՆՏՐՈՆ», — «ԳԱԶԵԳՈՐԾ», — «ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ
ԷԼԵԿՏՐՈՎԿԱՅԱՆ», — «ՆԱԻՐԻՏ ԳՈՐԾԱՐԱՆ» ԵՒ «ԳԱԶ» փակ բաժնետիրական
ընկերությունների, — «ԱՐՄԵՆԻԱՆ ՄԻԼԻՐՂԵՆ ՓՐՈՂԱՔՇՆ» — սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերության, — «ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ», — «ԱՍԿԵ
ԳՐՈՒՊ» — ԵՒ «ԶՈՒԼԱԿԵՆՏՐՈՆ» — բաց բաժնետիրական ընկերությունների
բնապահպանական հարկերի վրա:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՈՍԶԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐԿՈՂ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐԿԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-515-12.03.2020-ՏՏԳԲ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՈՍԶԱՐԿՆԵՐԻ

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|----|---|--|---|--|--|
| 1. | ՀՀ Կառավարություն | Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մաս | Օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդվածի 2-րդ մասը խմբագրել հանելով 2-րդ պարբերության երրորդ նախադասությունը, սակայն նշված մասով նոր խմբագրությամբ շարադրվող նախադասությունից բացի լրացվում է նոր նախադասությամբ: Ինչը արտացոլվել է Նախագծում 3-րդ պարբերությամբ՝ առանձին դրույթի տեսքով: | Ընդունվել է, կատարվել է համապատասխան լրացում: | Ընդունվել է |
| 2. | ՀՀ Կառավարություն | Օրենքի նախագծի 4-րդ հոդված | Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներում արդեն իսկ նախատեսված են այլ ընկերությունների ցանկը սահմանելու չափորոշիչները, ըստ համայնքների կամ բնակավայրերի մասհանումների բաշխման չափի հաշվարկման կարգը, և հաշվետվության ձևը սահմանելու լիազորություն ունեցող մարմինները՝ անհարկի կրկնությունից խուսափելու նպատակով՝ Նախագծի 4-րդ հոդվածը | Ընդունվել է, կատարվել է համապատասխան լրացում: | Ընդունվել է |

| | | | | | |
|--|--|--|--|--|--|
| | | | <p>շարադրել հետևյալ բովանդակությամբ և խմբագրությամբ՝</p> <p>«1. Մինչեւ սույն օրենքի առաջին հոդվածով սահմանված ցանկի սահմանումը սույն օրենքի կարգավորումները, ի լրումն բոլոր մետաղական օգտակար հանածո արդյունահանելու թույլտվություն ունեցող ընկերությունների, տարածվում են նաեւ «ԱՐՄԵՆԻԱՆ ՔԱՓԸՐ ՓՐՈՒԳՐԱՄ», «ԱՐԱՐԱՏՑԵՄԵՆՏ», «ՀՐԱԶԴԱՆ ՑԵՄԵՆՏ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ», «ՀՐԱԶԴԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱԶՄԱ-ԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՀՐԱԶԶԷԿ)», «ԵՐԵՎԱՆԻ ԶԵՐՄԱԷԼԵԿՏՐՈՎ-ԿԵՆՏՐՈՆ», «ԳԱԶԵԳՈՐԾ», «ՀԱՅԿԱ-ԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՎԿԱՅԱՆ», «ՆԱԻՐԻՏ ԳՈՐԾԱՐԱՆ» եւ «ԳԱԶ» փակ բաժնետիրական ընկերությունների, «ԱՐՄԵՆԻԱՆ ՄՈՒԻԲԴԵՆ ՓՐՈՂՎԱԲԵՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «ՄԱ-ՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ», «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» եւ «ԶՈՒԼԱԿԵՆՏՐՈՆ» բաց բաժնետիրական ընկերությունների բնապահպանական հարկերի վրա:</p> <p>Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝</p> <p>1) սույն օրենքի 1-ին հոդվածի առաջին մասում նշված այլ ընկերությունների ընտրության չափորոշիչները Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանվում են վեցամսյա ժամկետում.</p> | | |
|--|--|--|--|--|--|

| | | | | | |
|----|-------------------|----------------------------|---|---|-------------|
| | | | <p>2) սույն օրենքի 1-ին հոդվածի երկրորդ մասում նշված համայնքների եւ/կամ բնակավայրերի ցանկի կազմման և ըստ համայնքների եւ/կամ բնակավայրերի մասհանումների բաշխման չափի հաշվարկման կարգը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանվում է վեցամսյա ժամկետում.</p> <p>3) սույն օրենքի 2-րդ հոդվածի երկրորդ մասում նշված հաշվետվության ձեւը տարածքային կառավարման բնագավառի պետական լիազորված մարմնի կողմից հաստատվում է եռամսյա ժամկետում: »</p> | | |
| 3. | ՀՀ կառավարություն | Օրենքի նախագծի 5-րդ հոդված | <p>Նախագծի 5-րդ հոդվածով նախատեսվող կարգավորումն ամրագրված է որպես անցումային դրույթ, մինչդեռ, նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի</p> <p>5-րդ մասի պահանջները, Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող կարգավորումները ևս անհրաժեշտ է ամրագրել որպես անցումային դրույթներ:</p> <p>Հաշվի առնելով 4-րդ հոդվածում կատարված փոփոխությունները և լրացումը՝ Նախագծի 5-րդ հոդվածը ամբողջությամբ հանել:</p> | Ընդունվել է՝ կատարվել է համապատասխան փոփոխություն | Ընդունվել է |